

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԻՆԵ ՄԱՔՍԻՄԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ
ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ժ.02.07- «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Բրյուսովի անվան պետական
լեզվաբանական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Յու.Մ. Գաբրիելյան

Պաշտոնական ընդհանախոսներ՝ քանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ե.Վ Կառաբեգովա
քանասիրական գիտությունների
թեկնածու Ն.Ա. Շաչիվյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան պետական
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. դեկտեմբերի 6-ին, ժամը 14.30-ին ՀՀ
ԲՈՅ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Գերմանական
լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում: Հասցե՝ Երևան, Ալեք
Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. նոյեմբերի 5-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բ.գ.դ., պրոֆեսոր՝

 Ե.Լ. Երզնկյան

ժամանակակից գերմաներենի տիպաբանական առանձնահատկություններն արտահայտող միջոցներից են եղանակավորող մասնիկները¹ իրենց յուրահատուկ գործառույթով, որոնց վերաբերյալ մինչ այժմ կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ: Աշխատանքում փորձ է արվել գերմաներենի ԵՄ-ների տիպաբանական յուրահատկությունները բացահայտել այդ լեզվին բնորոշ օրինաչափությունների և գործաբանական բնութագրերի հաշվառումով՝ դրանք զուգադրելով հայերենի համապատասխան իրողությունների հետ, քանի որ հայերենի փաստերի ներգրավմամբ ԵՄ-ների յուրահատկությունները նորովի են ներկայանում:

Ոչ խոսքային և հարալեզվական բազմաթիվ արտահայտչամիջոցների կողքին որոշ լեզուներ ունեն նաև հատուկ բառեր, որոնց միջոցով խոսողը կարող է արտահայտել ասույթի բովանդակության վերաբերյալ իր դիրքորոշումը: Գերմաներենում բառերի նման դաս են կազմում ԵՄ-ները, որոնք նշում են խոսողի վերաբերմունքն ասվածի նկատմամբ և այդպիսով կարող են զուգահեռ դիտվել հարալեզվական այլ միջոցների հետ:

Վերջին տասնամյակների ընթացքում մեծացել է ԵՄ-ների նկատմամբ հետաքրքրությունը և նրանք գտնվում են տարաբնույթ լեզվաբանական ուսումնասիրությունների կենտրոնում: Գերմաներենում ԵՄ-ների կիրառությունը հաճախ պայմանավորված է որոշակի իրադրությամբ և համատեքստով: ԵՄ-ներից «աղքատ» լեզուներից գերմաներեն կատարվող թարգմանությունների ժամանակ կարևոր է, որ թարգմանիչը ծանոթ լինի գերմաներենում ԵՄ-ների ընդունված գործառույթին և դրանց իրացման հնարավորություններին: «Մասնիկներն իրենց էությամբ վերհատույթային են և նրանց նկարագրությունը ավելի բարդ է քան հնչերանգինը կամ շարահասությանը, քանի որ վերջինների էությունը այս կամ այն չափով փոխանցելի են գիտական վերացարկման լեզվով»²:

Գերմաներենի ԵՄ-ներն առավելապես հանդիպում են լեզվի խոսակցական տարբերակում: Սույն աշխատանքի շրջանակներում նպատակ է դրվում հնարավորինս բազմակողմանիորեն ներկայացնել գերմաներենի առավել գործածական ja, doch և schon եղանակավորող մասնիկների իմաստագործառական առանձնահատկությունները: Նշված մասնիկներից յուրաքանչյուրն առանձնանում է իր յուրահատուկ գործառույթային բնութագրով և ներկայանալի կարող է լինել ամբողջ կարգի համար:

¹ Այսուհետ՝ ԵՄ-ներ

² Николаева Т. Функции частиц в высказывании. М., Наука, 1985, с. 15.

Թեմայի արդիականությունը պայմանավորված է լեզուների ժամանակակից ուսումնասիրությունների համար կարևոր գործաբանական, միջմշակութային հաղորդակցման, ինչպես նաև տիպաբանական տեսությունների փոխազդեցության և փոխադարձ կապերի բացահայտմամբ: Գերմաներենի ԵՄ-ները մի կողմից փորձաքար են նշված տեսությունների քննարկման համար, և մյուս կողմից նրանց կարելի է նորովի մեկնաբանել տեսություններից յուրաքանչյուրի լույսի ներքո: Թեմայի արդիականությունը հիմնավորող մյուս հանգամանքը ԵՄ-ների հատկապես մայրենիի հետ զուգադրման անհրաժեշտությունն է, որի ընթացքում և ապա նաև արդյունքում ի հայտ են գալիս քննարկվող լեզվական երևույթի խորքային յուրահատկություններ ևս, ինչպես նաև բացահայտվում են մեր մայրենիի լեզվաարտահայտության նոր հնարավորություններ և դրսևորումներ:

Սույն աշխատանքի **նպատակն** է համապարփակ վերլուծության ենթարկել գերմաներենի եղանակավորող մասնիկները, ինչպես նաև բացահայտել նրանց իմաստային և գործառույթային առանձնահատկությունները տարբեր համատեքստերում, որը կնպաստի դրանց ավելի մեծ ուշադրություն դարձնելուն թե՛ թարգմանությունների ժամանակ և թե՛ գերմաներենի դասավանդման գործընթացում: ԵՄ-ների գործառական հաճախականությունը և կիրառումը կարևոր չափանիշ է, եթե ոչ միակը թարգմանության բնականությունը որոշելու համար, հատկապես, երբ խոսքը լեզվի խոսակցական տարբերակի մասին է: Այդ նպատակով պայմանավորված առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. Հնարավորինս ամբողջական ներկայացնել ԵՄ-ների ուսումնասիրության արդի վիճակը և առկա մոտեցումները:
2. Հանգամանակից վերլուծության ենթարկելով ԵՄ-ները որպես գերմաներենի տիպաբանական յուրահատկություն՝ ուսումնասիրել եղանակավորման դաշտը և ԵՄ-ների փոխհարաբերությունն ու փոխազդեցությունը եղանակավորման այլ արտահայտչամիջոցների հետ:
3. Ներկայացնել հայերենագիտության մեջ եղանակավորող բառերի ուսումնասիրության խնդիրը՝ գերմաներենի ԵՄ-ները ըստ անհրաժեշտության հայերենի համապատասխան միջոցների հետ զուգադրելու նպատակով:
4. Վեր հանել ԵՄ-ների գործաբանական-հաղորդակցական գործառույթները համատեքստերի հաղորդակցական արժեքն ու նշանակությունը բացահայտելու գործում, նշել նաև այլ միջոցներ, որոնց հետ միասին ԵՄ-ները իրականացնում են նշված գործառույթները:

Առաջադրված խնդիրները քննվում են լեզվական փաստերի նկարագրական և զուգադրական **մեթոդների**, ինչպես նաև

գործաբանական ու տիպաբանական լեզվաբանության առանձին դրույթների ու սկզբունքների կիրառմամբ:

Աշխատանքի **գիտական նորույթն** այն է, որ ուսումնասիրության մեջ փորձ է արվում իմաստագործառական տեսանկյունով գերմաներենի ԵՄ-ների առանձին օրինակների հիման վրա կատարել ամբողջ դասի համալիր քննություն՝ ներկայացնելով ԵՄ-ների տիպաբանական յուրահատկությունները և զուգադրելով դրանք հայերենի համապատասխան փաստերի հետ: Ընդ որում այստեղ որպես չափանմուշ-լեզու հանդես է գալիս գերմաներենը: Համապատասխան վերլուծություններում հայերենի փաստերի ներգրավումը նպաստում է գերմաներենի ԵՄ-ների առանձնահատկությունների առավել հիմնավոր, արդյունավետ քննարկմանը, համատեքստում ԵՄ-ների բազմաբնույթ գործառույթների իրացման պայմանների համապարփակ ուսումնասիրմանը:

Աշխատանքում ներկայացված և առաջադրված խնդիրները առնչվում են լեզվի բառային, ձևաբանական, շարահյուսական մակարդակներին: Կատարվում է նաև անհրաժեշտ խոսքային վերլուծություն: Ուսումնասիրությունը **տեսական** առումով կարող է օգտակար լինել լեզվական երևույթների տիպաբանական առանձնահատկությունների քննության, տեքստերի իմաստաբանական և գործաբանական, եղանակավորման կարգի, նրա արտահայտչամիջոցների փոխազդեցության վերլուծության գործում: Ատենախոսության արդյունքները կարող են **գործնականում** կիրառվել գերմաներենի, մասամբ նաև հայերենի զուգադրական քերականությունների, ինչպես նաև տիպաբանությանը և թարգմանաբանությանը նվիրված դասընթացներում և գերմաներենի գործնական ուսուցման մեջ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից և եզրակացությունից /151 էջ ընդհանուր ծավալով/: Տրված են նաև օգտագործված գիտական և գեղարվեստական գրականության, ինչպես նաև բառարանների ցանկերը:

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի ընտրությունը, արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, նշվում են ուսումնասիրության առարկան, նպատակները և գործադրված մեթոդները:

Առաջին գլխում /«եղանակավորող մասնիկների բնութագրման խնդիրները գերմանագիտության մեջ»/ քննարկվում են ԵՄ-ներին վերաբերող ընդհանուր հարցեր, ԵՄ-ների խնդիրը դիտարկվում է նրանց ուսումնասիրության ժամանակագրության մեջ և լեզվաբանական տարբեր ուղղությունների լույսի ներքո: Ներկայացվում են ԵՄ-ների վերաբերյալ կարևոր, հանգուցային աշխատությունները,

մանրամասնորեն քննարկվում է ԵՄ-ների՝ խոսքի մաս լինելու խնդիրը խոսքի մասերի առկա տեսությունների շրջանակում:

Առաջին գլխի առաջին ենթագլխում նշվում է, որ ԵՄ-ներով հարուստ լինելը պայմանավորված է գերմաներենի լեզվական տիպի առանձնահատկություններով: Գերմաներենը «իրադրությանը և համատեքստին ուղղված» լեզու է:³ Գերմաներենում բացահայտ նշվում է այն, ինչը այլ լեզուներում, մասամբ նաև հայերենում, հասկանալի է դառնում միայն համատեքստից: Օրինակ կարող են ծառայել նախածանցավոր բայերը: Հմմտ.՝

Er stolperte und fiel *hin*.

Plötzlich fiel er *um*.

Das Glas fiel *herunter*.

Նա սայթաքեց և *վայր* ընկավ:

Հանկարծ նա *ուշագնաց վայր* ընկավ:

Բաժակը *վայր* ընկավ:

Չնայած իրենց բազմազանությանը և հաճախադեպությանը ԵՄ-ները երկար ժամանակ դուրս են մնացել լեզվաբանական ուսումնասիրությունների շրջանակից, մասնավորապես այն պատճառով, որ նրանք դժվարությամբ են նկարագրվում ավանդական շարահյուսության և իմաստաբանության միջոցներով: ԵՄ-ների բուն ուսումնասիրությունը սկսվում է գործաբանության, խոսքային ակտերի տեսության զարգացման արդյունքում և այն ժամանակ, երբ լեզվաբանությունը անդրադարձ կատարեց գործաբանական խնդիրներին և այդպիսով ուսումնասիրության առարկա դարձրեց նաև լեզվի խոսակցական տարբերակը: Հետաքրքրությունը ԵՄ-ների նկատմամբ մեծացավ նաև այն պատճառով, որ լեզվաբանությունը դուրս եկավ նախադասության սահմաններից, քանի որ ԵՄ-ներով կարելի է կապեր ստեղծել նախադասության սահմաններից դուրս:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվում է ԵՄ-ների ուսումնասիրության պատմությունը ըստ աշխատությունների և ժողովածուների ժամանակագրության: Եղանակավորող մասնիկների ուսումնասիրության վերաբերյալ առաջին աշխատանքները գրվել են դեռևս կառուցվածքային լեզվաբանության ավանդույթով և ունեցել են մասամբ բաշխական և մասամբ էլ գործառնության ուղղվածություն: Եթե սկզբնական շրջանում ուսումնասիրությունները կատարվում էին հիմնականում գործաբանական տեսանկյունից, ապա 80-ականներին մասնիկների ուսումնասիրությունը, ստանալով գերազանցապես փորձառական բնույթ, տարվում էր նրանց հաղորդակցական և փոխազդեցական գործառնության քննությամբ: 80-ականների վերջին և 90-ական թվականներին առաջ եկան ավելի շատ գործնական

³ Coseriu E. Partikeln und Sprachtypus. Zur strukturell–funktionellen Fragestellung in der Sprachtypologie // Brettschneider G./ Lehmann Ch. (Hgg.) Wege der Universalienforschung. Tübingen, 1980, S. 206.

ուղղվածությունն ունեցող, իսկ հետագա տարիներին՝ նաև համեմատական բնույթի աշխատանքներ:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում քննության են առնվում եղանակավորող մասնիկների բնութագրման չափանիշներն ու սկզբունքները: «Եղանակավորող մասնիկ» եզրը գերմանական լեզվաբանության մեջ կիրառել է առաջին անգամ Բրիկկմանը՝ հիմք ընդունելով Կրիվոնոսովին: Վերջինն իրեն հաստատել է լեզվաբանական գրականության մեջ և, մեր կարծիքով, ամենահարմարն է գործառնությային բազմազանության առումով:

Ավանդական լեզվաբանությունը առաջադրեց մասնիկների առանձին խոսքի մաս լինելու կամ չլինելու հարցադրումը: Խոսքի մասերի բաժանումն, ինչպես հայտնի է, կարող է կատարվել տարբեր դիրքերից. ամենատարածվածները դրանցից ձևաբանական, շարահյուսական և իմաստային մոտեցումներն են: Թեքվող խոսքի մասերի, այսինքն՝ ձևաբանական կարգերով օժտված բառերի դասակարգման հարցը գործնականում լուծված է ցանկացած լեզվի համար: Սակայն, երբ խոսքը վերաբերում է չթեքվող խոսքի մասերին, առնչվում ենք դասակարգման լիակատար խառնաշփոթի հետ: Գերմաներենի քերականություններում չթեքվող խոսքի մասերի քանակը խիստ տատանվում է: Վերջինների /թե՛ գերմանական, և թե՛ խորհրդային/ հետազոտությունը ցույց է տալիս, որ չկա նույնիսկ 2 քերականություն, որտեղ չթեքվող խոսքի մասերի դասակարգումը նման լինի: Սակայն արդի տեսական լեզվաբանության զարգացման և ժամանակակից մեթոդների զինվածության տեսակետից այդպիսի խայտաբղետ պատկերը բառերի դասակարգման ուղորտում չի կարող համարվել գոհացուցիչ: Անթեքականությունը մյուս խոսքի մասերից մասնիկների առանձնացման համար միայն մեկ չափանիշ է: Մասնիկները բնութագրող հետագա հատկանիշներից հարկ է նշել նրանց բառային իմաստից գրեթե զուրկ լինելը, քերականական գործառնութ չունենալը և նախադասության անդամ չլինելը: Միայն միաժամանակ հաշվի առնելով բոլոր հատկանիշները՝ կարելի է սահմանազատել եղանակավորող մասնիկները խոսքի մյուս մասերից: Յետևաբար դասակարգման ներկայացված փորձերից ամենահաջողվածը համարում ենք Յելբիգի փորձը:⁴ Այն ավելի է մոտենում մասնիկների սահմանմանը, որն ընդունված է նորագույն հետազոտության մեջ, ըստ որի՝ մասնիկներ ասելով հասկացվում է «չթեքվող, նախադասության անդամ չհանդիսացող բառախմբեր, որոնք զուրկ են ինքնուրույն

⁴ Helbig G. Lexikon deutscher Partikeln. Leipzig, 1988.

բառային իմաստից», բայց ազդում են իրենց հետ առնչվող տարրերի վրա և եղանակավորում դրանք⁵:

Երկրորդ գլուխը, որը վերնագրված է «եղանակավորող մասնիկների կարգային և իմաստաշարահյուսական յուրահատկությունները», բաղկացած է երեք ենթագլխից: Այստեղ ներկայացվում են գերմաներենի ԵՄ-ների ձևաբանական, շարահյուսական առանձնահատկությունները, քննարկվում են նրանց բառային իմաստի և հարակից հարցերը, ԵՄ-ներով զբաղվող հեղինակավոր լեզվաբանների՝ Դ. Վայդթի, Է. Յենչելի, Է. Կոսերյուի, Գ. Յելբիգի, Վ. Յայնրիխսի, Մ. Դոհերթի, Յ. Լյուբենի և այլոց մոտեցումները դրանց վերաբերյալ:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում քննարկվում են եղանակավորող մասնիկների ձևաբանական, իմաստային և տեքստակազմիչ առանձնահատկությունները: **Ձևաբանորեն և շարահյուսորեն** ԵՄ-ները առանձնանում են գերմաներենի եղանակավորման այլ միջոցներից մի շարք բնութագրական հատկանիշներով: Որպես կանոն, ԵՄ-ները միավանկ են և համանուններ ունեն այլ խոսքի մասերի մեջ: ԵՄ-ների տարբեր գործառույթները ծագումնաբանորեն մասամբ իրար հետ կապ ունեն և իմաստային առումով ընդհանուր գծեր են ի հայտ բերում: Այսպես, օրինակ՝ *aber-ը*՝ որպես շաղկապ, նշում է հակադրությունը նախորդ նախադասության բովանդակությանը, իսկ ԵՄ-ի գործառույթով՝ հակադրություն խոսողի սպասման և իրականության միջև: Օրինակ՝ *Du bist aber groß geworden!* - *Չամա թե մեծացել ես:* ԵՄ-ները գերմաներենում առանձնանում են հետևյալ ձևաբանական և շարահյուսական բնութագրերով.

- Նրանք չեն թեքվում: Ի տարբերություն մակբայների, որոնք կարող են կազմել համեմատության աստիճաններ, ԵՄ-ները երբեմն կարող են բառային միջոցներով կազմել համեմատության աստիճան, օր.՝ *ganz bestimmt*⁶:
- Ի տարբերություն եղանակավորող բառերի և մակբայների՝ ԵՄ-ները չեն կարող նախադասության մեջ գրավել առաջին դիրք՝ խոնարհվող բայից առաջ, և հետևաբար չեն կարող լինել նախադասության անդամ:
- ԵՄ-ները նախադասության մեջ հաջորդում են խոնարհվող բային, չեն կարող ժխտվել և, որպես կանոն, դրվում են նախադասության ռեմայից առաջ:⁷ ԵՄ-ների մեծ մասի

⁵ Bußmann H. Lexikon der Sprachwissenschaft. Stuttgart, 2008, S. 509.

⁶ Gornik-Gehardt H. Zu den Funktionen der Modalpartikel schon und einiger ihrer Substituentia. Tübingen, 1981, S. 33.

⁷ Hentschel E. Funktion und Geschichte deutscher Partikeln. *Ja, doch, halt und eben.* RGL, Tübingen, Niemeyer, 1986, S. 204-237.

գործառույթը սահմանափակվում է որոշակի նախադասությունների տեսակներով, ԵՄ-ները վերաբերում են ամբողջ նախադասությանը:

- Միայն ԵՄ-ներով հնարավոր չէ պատասխանել հարցերի:
- ԵՄ-ները սովորաբար անշեշտ են: Մի քանի ԵՄ-ներ ունեն իրենց շեշտված տարբերակները (Du wohnst nicht hier? Wo wohnst du *d°enn?*):

ԵՄ-ների ուսումնասիրության ընթացքում քննարկման կարևոր առարկա է նաև նրանց **իմաստի** հարցը: ԵՄ-ների բառիմաստի մասին խոսելիս ի նկատի են ունենում ԵՄ-ների բնորոշումը իմաստային մակարդակում: Հաճախ է արտահայտվել այն կարծիքը, թե ԵՄ-ները չունեն առանձին իմաստ: Այդ տեսակետը հիմնվում է նաև այն փաստի վրա, որ ԵՄ-ները չեն վերաբերում արտալեզվական իրականության առարկաներին և իրողություններին: ԵՄ-ների իմաստի վերաբերյալ ուսումնասիրությունները ընթացել են հիմնականում երկու ուղղությամբ: Եթե մի կողմից սկզբնական շրջանում փորձ էր արվում բաժանել առանձին ԵՄ-ի իմաստը հնարավոր տարբերակների կամ գործառույթային տիպերի, ապա մյուս կողմից՝ վերջին շրջանում ավելի նկատելի է իմաստային միեմակիզմը: Այսինքն փորձ է արվում ոչ միայն ԵՄ-ների առանձին կիրառություններին, այլ նաև դրանց մնացած գործառույթային դասերին բնորոշ հիմնական նշանակություն գտնել: ԵՄ-ների իմաստային տեսակը գտնվում է գրեթե նույն հարթության վրա, ինչ որ դերանուններինը, շաղկապներինը և այլն: Տարբեր հեղինակների իմաստային նկարագրությունները հաճախ հանդես են բերում ընդհանրություններ: Այսպես, երբ *doch*-ի մասին ասվում է, որ այդ ԵՄ-ի անփոփոխակ իմաստը կայանում է «երկու այլընտրանքային իրողությունների համադրման»⁸ մեջ, ապա դա միանգամայն համընկնում է *doch*-ի «թույլ հակադրական երանգ»⁹ ունենալու ընդհանրական իմաստի բնութագրին կամ Հենչելի այն բնորոշմանը, որ *doch*-ը միշտ արտահայտում է երկու իրողությունների միջև հակասությունը¹⁰:

Բազմաթիվ օրինակներով ցույց է տրվում, որ ԵՄ-ների իմաստները կիրառվում են որպես գործիքներ՝ հասկացնելու խոսակցին, թե նա ինչպես կարող է դասակարգել ասույթը և թե ինչպես և ինչ հիմքի վրա կարելի է կառուցել ընդհանուր երկխոսություն:

⁸ Doherty M. Epistemische Bedeutung. Akad.-Verl. Berlin (Studia germanica XXIII), 1985, S. 66.

⁹ Weydt H. Abtönungspartikel. Die deutschen Modalwörter und ihre französischen Entsprechungen, Bad Homburg, 1969, S. 39.

¹⁰ Hentschel E. Funktion und Geschichte deutscher Partikeln. *Ja, doch, halt und eben*. RGL, Tübingen, Niemeyer, 1986, S. 28.

ԵՄ-ները հաճախ դիտարկվում են որպես տեքստի կապակցվածությունն ապահովող լեզվական միջոցներ: Որոշ ԵՄ-ներ կապակցում են ուղղակիորեն, մինչդեռ մյուսներն ավելի շուտ միացնում են «իրադրային և հուզաարտահայտչական նրբերանգներն ասույթի իլոկուցիային»¹¹: ԵՄ-ներից շատերն ունեն ցուցչային ծագում և գործում են որպես «անդրիադորական ցուցիչներ»:¹² ԵՄ-ներով ստեղծվող կապերը բազմազան են. դրանք կարող են մատնանշել հաղորդակցական իրադրության տարրերը կամ նախորդ ասույթները: Դրանցով կարելի է վկայակոչել խոսակիցների իմացությունը և կապ ստեղծել նրանց ակնկալիքների միջև: ԵՄ-ները կարող են ստեղծել ինչպես հետընթաց, այնպես էլ առաջընթաց կապեր: Այսպես՝ ԵՄ *denn* պարունակող հարցերով խոսողը միշտ կապ է ստեղծում խոսակցի անմիջականորեն նախորդող ասույթի հետ: Խոսողը *denn* հարցերով մեծ մասամբ պահանջում է նախորդ ասույթի պարզաբանում կամ ճշտում:¹³ Օրինակ՝

Wo arbeitest du *denn*? (Wenn du nicht bei der Firma arbeitest)

Իսկ որտե՞ղ ես աշխատում /եթ ֆիրմայում չես աշխատում/:

Համատեքստի և փոխգործողության հետ ԵՄ-ների ունեցած կապից բխում է այն հետևությունը, որ ԵՄ-ները չեն կարող լիովին համարժեք նկարագրվել նախադասության շրջանակում, քանի որ նրանք ստեղծում են կապեր վերջարահյուսական մակարդակում:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում քննարկվում է ԵՄ-ների և եղանակավորման այլ միջոցների փոխազդեցությունը: Եղանակավորում արտահայտելու հնարավորությունը կարող է դիտվել որպես լեզվական ընդհանրույթ: Հայնրիխսը նշում է, որ եթե տարբեր լեզուներ իրենց տրամադրության տակ սկզբունքորեն նույն արտահայտչամիջոցներն ունեն, հաճախ տարբերվում են նրանով, թե միջոցներից որին են նախապատվություն տալիս¹⁴: Ասույթը եղանակավորում են ոչ միայն ԵՄ-ները, այլ նաև ուրիշ լեզվական, այսինքն՝ քերականական, բառային, հնչերանգային-հնչյունական, հռետորական և շարահյուսական միջոցներ: Այդ փաստն իր հերթին ընդգծում է ԵՄ-ների և գործաբանական մակարդակում գործող այլ տարրերի հետ կապը: Այդպիսի միջոցներից է բայի Konjunktiv եղանակը: Անուղղակի խոսքը վերարտադրելու կողքին գերմաներենի առաջին ըղծականն /Konjunktiv I/ արտահայտում է նաև ցանկություն, խնդրանք կամ հրաման:

¹¹ Franck D. Grammatik und Konversation. Scriptor Verlag, Königstein, 1980, S. 253.

¹² Hentschel E. Funktion und Geschichte deutscher Partikeln. *Ja, doch, halt und eben*. RGL, Tübingen, Niemeyer, 1986, S. 28.

¹³ Helbig G. Lexikon deutscher Partikeln. Leipzig, 1988, S. 107.

¹⁴ Heinrichs W. Die Modalpartikeln im Deutschen und Schwedischen. Eine kontrastive Analyse. /Linguistische Arbeiten/, De Gruyter, Tübingen, 1981, S. 70- 74.

Գերմաներենի երկրորդ ըղձականը /Konjunktiv II/ արտահայտում է իրողության անիրական լինելը գլխավոր, պայմանի, եղանակային որոշիչ երկրորդական կամ անիրական ցանկություն արտահայտող նախադասություններում:

Ich *täte es/ würde es tun / hätte es getan.* Ես դա կանեի:

Wenn ich es *täte / tun würde/ getan hätte.* Եթե ես դա անեի:

Որոշակի եղանակավորում է արտահայտում նաև բայի հրամայական եղանակը. /Sag die Wahrheit! Ասա՛ ճշմարտությունը/, կամ անորոշ դերբայի 2-րդ ձևը /Infinitiv II/, երբ խոսքն առավելապես ուղղված է մարդկանց խմբին /Stillgestanden! Լուռ կանգնել/: Բայի ժամանակային որոշ ձևեր նույնպես կարող են եղանակավորություն արտահայտել, ինչպես ապառնին, խոսողի վերաբերմունքը կամ հրաման նշելու համար. Er *wird (wohl) krank sein.* Նա /հավանաբար/ հիվանդ է: Du *wirst jetzt damit endlich aufhören!* Դու հիմա վերջապես կդադարեցնես դա:

Խոսողի վերաբերմունքն են նշում նաև եղանակավորող բառերը /wahrscheinlich, vielleicht, natürlich, hoffentlich և այլն/ և եղականավորող բայերը /können, müssen, sollen, dürfen, mögen/:

Er *soll* diese Rolle schon gespielt haben.

Ասում են, նա արդեն խաղացել է այդ դերը:

Er *will* diese Rolle gespielt haben.

Նա պնդում է, որ խաղացել է այդ դերը:

Փորձելով սահմանել եղանակավորումը, Բուբլիցը տարբերակում է «ճանաչողական», «վիլիտիվ/կամային» և «ենտիվ/հուզական» տեսակները¹⁵: ճանաչողական եղանակավորում ասելով՝ Բուբլիցը հասկանում է վերաբերմունքն ասվածի բովանդակության նկատմամբ, երբ խոսողը մեկնաբանում է նախադասության ճշմարտացիությունը: Դա կարող է արտահայտվել բայի եղանակի, հաստատական և ժխտական մասնիկների /ja, nein, nicht, doch/, եղանակավորող բայերի, ճանաչողական եղանակավորող բառերի, ինչպես նաև նախադասության տարբեր տեսակների միջոցով: Բուբլիցը խոսում է կամային եղանակավորության մասին, երբ խոսողն «ուզում է ազդել լսողի վարքի վրա, փոխել գործողությունը կամ իրադրությունը»: Կամային եղանակավորում արտահայտելու համար առավելապես օգտագործում են *mögen, müssen, sollen* և *wollen* եղանակավորող բայերը: Եղանակավորման երրորդ տեսակը, ըստ Բուբլիցի, հուզականն է, և

¹⁵ Bublitz W. Ausdrucksweisen der Sprechereinstellung im Deutschen und Englischen. Untersuchungen zur Syntax, Semantik und Pragmatik der deutschen Modalpartikeln und Vergewisserungsfragen und ihrer englischen Entsprechungen. Tübingen /Linguistische Arbeiten 57/, Niemayer, 1978, S. 6-8.

գերմաներենում այն հիմնականում արտահայտվում է եղանակավորող մասնիկների միջոցով: Գերմաներեն տեքստում ԵՄ-ի միջոցով առաջ բերած եղանակային գնահատականը հայերեն թարգմանության մեջ կարող է վերարտադրվել ճանաչողական եղանակավորում արտահայտող եղանակավորող բառերի կամ մակբայների միջոցով, ինչպես նաև հնչերանգով և եղանակավորող բառերով:

Խոսքային ակտերի տեսության համաձայն՝ եղանակավորումն առնչվում է ասույթի իլոկուցիայի հետ: Վունդերլիխը արտահայտել է այն տեսակետը, թե ԵՄ-ները նախանշում են այն ասույթի իլոկուցիան, որտեղ դրանք հանդիպում են: Ըստ նրա՝ ԵՄ-ների գործառույթը բազմանշանակ նախադասության հաղորդակցական գործառույթը միանշանակ դարձնելն է: Այսպես, երբ պատմողական նախադասությանն ավելանում է ԵՄ *mal*-ը, վերջինին հաղորդում է հրամանի իմաստ /Du kannst *mal* das Fenster schließen Դու կարող ես *մի հատ* պատուհանը փակել/, մինչդեռ *ja*-ն նույն նախադասությանը տալիս է խորհրդի իմաստ /Du kannst *ja* das Fenster schließen. *Դե*, դու կարող ես պատուհանը փակել/:¹⁶

Սահմանելով եղանակավորումը՝ Վայդթը տարբերակում է խոսքի ներկայացման և մտադրության մակարդակները: Ներկայացման մակարդակի դեպքում խոսքը «ասվածի մասին է: Սա նորմալ, սովորական մակարդակն է, այն, որին քիչ բացառություններով ծառայում են լեզվական բոլոր միջոցները»:¹⁷ ԵՄ-ների գործառույթը, սակայն, ծավալվում է մտադրության մակարդակում. նրանք ցույց են տալիս, թե խոսողն ինչպիսի դիրքորոշում է դրսևորում ասվածի նկատմամբ:

Այնպես, ինչպես միևնույն լեզվում լեզվական, հարալեզվական միջոցները գործում են խաչաձև և միաժամանակ, այսինքն՝ միևնույն գործառույթն իրականացվում է տարբեր միջոցներով, այնպես էլ կարող են գերմաներենի ԵՄ-ների համապատասխանությունները հայերենում իրականացվել տարբեր մակարդակներում:

Երկրորդ զվխի երրորդ ենթազույգը անդրադառնում է հայերենի եղանակավորող բառերին, քանի որ գերմաներենի ԵՄ-ները քննարկելիս անխուսափելիորեն անհրաժեշտություն է առաջանում վերջինները զուգադրել հայերենում հանդիպող համապատասխան երևույթների հետ: Զուգադրման համար անհրաժեշտ հիմք ստեղծելու նպատակով ներկայացվում են հայերենագիտության մեջ եղանակավորող բառերի վերաբերյալ ուսումնասիրությունները: Միևնույն ժամա-

¹⁶ Wunderlich D. (Hg.) Linguistische Pragmatik. Schwerpunkte Linguistik und Kommunikationswissenschaft. Bd. 12, Frankfurt/M., Athenaeum, 1972, S. 18, 137.

¹⁷ Weydt H. Abtönungspartikel. Die deutschen Modalwörter und ihre französischen Entsprechungen. Bad Homburg, 1969, S. 61.

նակ համեմատվում են գերմանագիտության և հայագիտության մոտեցումները մի կողմից եղանակավորող մասնիկների և մյուս կողմից՝ եղանակավորող բառերի լույսի ներքո: Փորձ է արվում նաև հայերենի նյութի հիման վրա ցույց տալ հայերենում եղանակավորող մասնիկների առկայությունը:

Երրորդ «Գերմաներենի ja, doch, schon եղանակավորող մասնիկների իմաստագործառական առանձնահատկությունները /հայերենի հետ զուգադրմամբ/» գլխում վերլուծվում են նշված ԵՄ-ների իմաստագործառական առանձնահատկությունները, նրանց կիրառությունը նախադասությունների տարբեր տեսակներում, միաժամանակ քննարկվում է նրանց հայերեն վերարտադրման հնարավորությունները:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում քննության են առնվում ja ԵՄ-ի իմաստագործառական առանձնահատկությունները, նրա կիրառման հնարավորությունները: Խոսվում է նաև ja ԵՄ-ի տարբեր դրսևորումների, մասնավորապես որպես պատասխան մասնիկ և իմաստային սաստկացման նպատակով կիրառությունների մասին:

Ja ԵՄ-ը քննարկելիս նախ առանձնացնում են նրա շեշտված և անշեշտ տարբերակները: Շեշտակիր ja-ն առավելապես հանդիպում է հորդորական, արգելական հրամաններում և այդ խոսքային գործունեության մեջ ունի «իլլուկոցիան ձևափոխող գործառույթ, այն ընդգծում, շեշտում է ասույթը, մասնավորապես սպառնալիքի և զգուշացման իմաստով»:¹⁸ Հրամանները, հորդորները, մտադրության հայտարարությունները կամ ցանկությունները շեշտված ja-ով ավելի արտահայտիչ և անհետաձգելի են դառնում

Klaas wird Lebensmittel verlangen, ein Versteck brauchen: dass du mir *ja* nix tust, ohne mir Bescheid zu sagen /Lenz S., 1986: 85/.

Կլասը ուտելիք կպահանջի, թաքստոցի կարիք կունենա, *հանկարծ* որևէ բան չամեն առանց ինձ ասելու:

Շեշտված ja-ն հայերենում կարելի է արտահայտել *հանկարծ* մակբայով, որը, մեր կարծիքով, այդ կիրառությամբ չունի մակբայական նշանակություն, և այս դեպքում հայերենում նույնպես կարելի է խոսել մասնիկային գործառույթի մասին, քանի որ, ինչպես գերմաներենում, հայերենում ևս այն դուրս թողնելու դեպքում չի խախտվում նախադասության իմաստային ամբողջականությունը, սակայն փոխվում է հաղորդակցական իմաստը:

Անշեշտ ja-ն կարող է հանդես գալ պատմողական և բացականչական, ինչպես նաև որոշ երկրորդական նախադասու-

¹⁸ Franck D. Grammatik und Konversation, Scriptor Verlag, Königstein, 1980, S. 228.

թյուններում: Պատմականորեն ja-ն առաջացել է ցուցչային արմատից¹⁹ և ունի ծանոթ իրադրությամբ, թեմային հղելու գործառույթ: Քանի որ ja-ն արտահայտում է ընդհանուր գիտելիք կամ որևէ բանին ծանոթ լինելը, ապա նա կապ է ստեղծում խոսողի գիտելիքի կամ դիրքորոշման և մյուս անձի գիտելիքի կամ դիրքորոշման միջև, ինչպես նաև առաջացնում է տեքստահրադրային կապ նախորդ ասույթի հետ: Պատմողական տեքստերում ja-ն կարելի է փոխարինել հետևյալ հարասությամբ՝ wie bereits weiter oben gesagt – ինչպես վերը նշվել է: Պատմողական և բացականչական նախադասություններում եՄ ja-ի կիրառությամբ խոսողը նշում է գրուցակիցների ընդհանուր շրջանակներում գտնվող իրողության ակնհայտությունը: Փոխգործողության մեջ ja-ն ունի համաձայնություն ստեղծելու կամ դրա առկայությունն ընդգծելու և լսողի դիրքորոշումը հաշվի առնելու իմաստ: ԵՄ ja-ն **փաստարկային** հարաբերություն է ցույց տալիս գերադաս և նախորդ նախադասության մեջ:²⁰ Դա պայմանավորված է ja-ի իմաստով. հայտնի և ակնհայտ իրողությունները հատկապես հարմար են փաստարկների համար: ԵՄ ja-ի բոլոր կիրառությունների ընդհանրությունը բացահայտորեն չարտահայտված իրողությունները որպես ճիշտ և դիպուկ բնութագրելու հատկանիշի մեջ է: Նշելով գրուցակիցների ընդհանուր իմացությունը՝ ԵՄ ja-ն հաճախ ձեռք է բերում տեքստը կապակցող գործառույթ՝ ստեղծելով հիմնավորման և պատճառային կապեր, ինչպես նաև նշելով հիմնավորման իլոկուտիվ դերը: Նման դեպքերում ja-ով նախադասությունը կարելի է փոխարինել պատճառի երկրորդական weil կամ denn շաղկապներ պարունակող նախադասություններով.

Oh, sagte der Professor mitleidig, die Zähne, schlimm? Er selbst habe **ja** Glück gehabt, ihm fehlen bloß fünf /Kehlmann D., 2005: 83/.

Պրոֆեսորը կարեկցանքով նայեց նրան և ասաց՝ ատամներ՞րը, սարսափելի է: Իր բախտը բերել է, ինքն ընդամենը հինգ ատամ չունի /Քելման Դ., 2010: 54/:

Վերը բերված ja պարունակող նախադասությունը կարելի է ասել weil պարունակող հարասությամբ՝

Ich habe **ja** Glück, weil mir bloß fünf Zähne fehlen.

Ich habe **ja** Glück, denn mir fehlen bloß fünf Zähne.

Հայերեն թարգմանություններում ja-ն դեպքերի մեծ մասում համապատասխանություն չի գտնում և բաց է թողնվում: Շատ դեպքերում հանդիպում են դիպվածային թարգմանություններ, որոնց

¹⁹ Hentschel E. Funktion und Geschichte deutscher Partikeln. *Ja, doch, halt und eben.* RGL, Tübingen, Niemeyer, 1986, S. 40.

²⁰ Franck D. Grammatik und Konversation. Scriptor Verlag, Königstein, 1980, S. 232.

տարաբնույթ լինելու պատճառով հնարավոր չէ տալ ամբողջական, ընդհանրական բնութագիր:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում անդրադարձ է կատարվում գերմաներենի *doch* մասնիկի առանձնահատկություններին և նշվում, որ ԵՄ *doch*-ը աչքի է ընկնում իր բազմակողմանիությամբ: Այն կարող է հանդես գալ գրեթե բոլոր տեսակի նախադասություններում՝ բացառությամբ հավաստիական հարցականների, և կիրառվել ամենատարբեր իլոկուտիվ նպատակների համար: ԵՄ *doch*-ի բոլոր կիրառություններում առկա է հակադրական բաղադրիչ²¹ և նրա կիրառությամբ ստեղծվում է հակադրական կառուցվածք: Դա վերաբերում է նաև *doch*-ի՝ պատասխան մասնիկ լինելու գործառնության, որով արձագանքում են նախորդող ժխտական ասության, ինչպես նաև շաղկապային գործառնության և շեշտված *doch*-ի կիրառությամբ: Շաղկապը կարելի է փոխարինել *aber*-ով, շեշտված *doch*-ը՝ *dennoch*-ով և *trotzdem*-ով: Օրինակ՝

A: Kommst du nicht mit? Չե՞ս գալիս մեզ հետ:

B: **Doch.** Ինչպե՞ս չէ:

Ich habe ihn gegrüßt, **doch/aber** er hat mich nicht erkannt.

Ես նրան բարևեցի, բայց նա ինձ չճանաչեց:

ԵՄ *doch*-ի կարևոր գործառնությունից է հայտնիի, նախօրոք հիշատակվածի կամ ակնհայտի՝ թեմայի, բացահայտ նշումը: Հայտնի լինելը, ինչպես *ja*-ի դեպքում, բխում է *doch*-ի ցուցչային բնույթից, որը ինչպես ցույց է տվել Հենչելը, առաջացել է *dieses /այս/* նշանակությամբ ցուցական դերանունից:²²

ԵՄ *doch*-ի կիրառությունը **հաստատական** նախադասություններում վկայակոչում է անմիջապես նախորդ խոսքային գործողությունը, խոսակցի գործողությունը կամ թերացումը, որը քննադատում կամ մերժում են: Անմիջական արձագանքը *doch*-ով գործում է որպես հակափաստարկ նախորդող ասության: Շատ դեպքերում *doch*-ը հստակեցնում է նախատինքի, կշտամբանքի գործառնությունը, հաճախ հանդես է գալիս նաև որպես պատասխան նախատինք կամ արդարացում նախորդ կշտամբանքը թուլացնելու նպատակով:²³ Հետևյալ օրինակում առկա է նախատինքի երանգ, որն հատկապես ընդգծվում է *doch*-ի կիրառությամբ:

«Mein Gott, ich bin *doch* katholisch, das *weißt* du **doch**.» (Böll H., 1997:

51)

²¹ Weydt/Hentschel Kleines Abtönungswörterbuch. // Weydt, H. (Hg.), 1983, S. 9.

²² Hentschel E. Funktion und Geschichte deutscher Partikeln. *Ja, doch, halt und eben*. RGL, Tübingen, Niemeyer, 1986, S. 148.

²³ Franck D. Grammatik und Konversation. Scriptor Verlag, Königstein, 1980, S. 177-180.

- Աստված իմ, չէ՞ որ ես կաթոլիկ եմ, դու *hn* դա գիտես:

Ինչպես էՄ *ja*-ն *doch*-ը ևս խոսքում ունի հիմնավորման գործառույթ: *Doch*-ով հավանություն հայցող ասույթները հաճախ ունենում են ենթադրության կամ հետևության իմաստ: Նման դեպքերում *doch*-ը համակցվում է *können* և *müssen* մոդալ բայերի, ապառնիի կամ *sicher*, *bestimmt*, *dann* մակբայների և եղանակավորող բառերի հետ: ԵՄ *doch*-ը հաճախ հանդես է գալիս **բացականչական նախադասություններում**, որտեղ արտահայտվում է խոսողի զարմանքը: *Doch*-ը նշում է խոսողի ակնկալիքի և փաստացիորեն տեղի ունեցող իրողության միջև հակադրությունը, ինչպես՝

Du hast ***doch*** Angst! *Բայց* դու վախենում ես:

ԵՄ *doch*-ով նախադասությունը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ՝ «Մտքովս չէր անցնում, որ դու կարող ես վախենալ»:

Անշեշտ *doch*-ը կարող է հանդես գալ ուղիղ շարադասությամբ **հարցական** նախադասություններում, որոնք որպես այդպիսին ճանաչելի են միայն հնչերանգով և կարող են անվանվել «հնչերանգային հարցեր»²⁴ կամ «երկրորդական հարցեր»²⁵: Օրինակ՝

Du kommst ***doch*** am Sonntag zum Ausflug? Կիրակի գալու ես չէ՞^o էքսկուրսիայի:

Շրջուն շարադասությամբ այդ կիրառությունը հնարավոր չէ:

Հրամայական ձևերում *doch*-ը նշում է կատարվելիք գործողության և տվյալ իրադրության միջև հակասությունը, որը *doch*-ով լրացուցիչ շեշտադրում է ստանում: ԵՄ-ն այս դեպքում ասույթը կապում է իրադրային համատեքստի հետ:²⁶ Հաղորդակցական իրադրության կամ ընդունված նորմերի և սովորույթների հիման վրա խոսակցի համար արդեն պարզ է, որ պահանջվող գործողության կատարումն անհրաժեշտ կամ զոնե հասկանալի է: Օրինակ՝

Lassen Sie ***doch*** diese kindische Sauferei /Böll H., 1997: 113/.

- *Դե* թողեք այդ երեխայական հարբեցողությունը:

Օրինակների դիտարկումը թույլ է տալիս ասել, որ հրամանների մեծ մասը անմիջականորեն վերաբերում է հաղորդակցմանը: Անհամբեր և եռանդուն հրամաններում *doch*-ը համակցվում է *mal*-ի կամ *endlich*-ի հետ:

ԵՄ *doch* պարունակող **ցանկություն** արտահայտող պայմանի երկրորդական նախադասություններում նույնպես առկա է խոսողի

²⁴ Henschel E. Funktion und Geschichte deutscher Partikeln. *Ja, doch, halt* und *eben*. RGL, Tübingen, Niemeyer, 1986, S. 136.

²⁵ Doherty M. Epistemische Bedeutung. Akad.-Verl. Berlin (Studia germanica XXIII), 1985, S. 31.

²⁶ Henschel E. Funktion und Geschichte deutscher Partikeln. *Ja, doch, halt* und *eben*. Reihe germanistische Linguistik, Tübingen, Niemeyer, 1986, S. 139.

ցանկության և իրականության միջև բնորոշ հակադրությունը: Ցանկալի իրողությունը կամ դեռ չի սկսվել կամ էլ չի կարող սկսվել: Այդպիսի նախադասություններում doch-ը հնարավոր է փոխարինել nur-ով կամ bloß-ով կամ համակցել դրանց հետ. Wenn er doch/bloß/nur käme! - Միայն թե նա գար:

Կիրառության տարբեր տեսակների վերլուծությունը ցույց տվեց, որ doch-ով մատնանշվող հակադրության բևեռները երևում են տարբեր տեսակի /հարցական, հրամայական, բացականչական, պատմողական/ նախադասություններում:

Հայերենում doch-ի միանշանակ համարժեքներ չկան, կան միայն մասնակի համարժեքներ: Հրամայական նախադասություններում doch-ը հայերենում հիմնականում վերարտադրվում է *դե* եղանակավորող բառով, պատմողական և հարցական նախադասություններում՝ *չէ որ*, *ախր* արտահայտություններով: Գրեթե բոլոր օրինակներում թարգմանությունները համատեքստային են:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում քննության են առնվել schon եՄ-ի տարբեր դրսևորումները: ԵՄ schon-ը ավելի քիչ հաճախականությամբ է օժտված քան ja-ն և doch-ը, սակայն նույնքան կարևոր դեր է խաղում փաստարկային կապերի մեջ և այդ առումով ընդհանրություններ ունի doch-ի հետ: Ինչպես doch-ը, այնպես էլ schon-ը կարող է հանդես գալ տարբեր տեսակի /պատմողական, հրամայական և հարցական/ նախադասություններում, իսկ առանձին՝ որպես պատասխան-մասնիկ:

ԵՄ schon-ով կարելի է արձագանքել զրուցակցի հարցին, ինչպես նաև նախորդող պատմողական, հաստատական ասույթին: ԵՄ schon-ով բացահայտ կերպով արտահայտվում է սահմանափակ, մասնակի համաձայնություն, ինչը առաջ է բերում ակնկալիք, որ նախադասությունը շարունակվում է: Թեև schon-ը սկզբունքորեն համաձայնություն է արտահայտում նախորդ ասույթին, սակայն միևնույն ժամանակ առարկում է վերջինից բխող հետևությանը: Schon-ով նախադասության մեջ ստորոգյալի վավերականությունը մի բաղադրիչի համար հաստատվում է, իսկ մյուսի համար վիճարկվում: Այդպիսով երկու բաղադրիչները հակադրվում են միմյանց:

A: Leo und Rita sind die schlimmsten Aufschneider, die man sich vorstellen kann.

B: Leo *schon*, -aber Rita nicht, sie will ihm nur nicht widersprechen²⁷

Ա. Լեոն և Ռիտան ամենավատ փչաններն են, որ մարդ կարող է պատկերացնել:

²⁷ Franck D. Grammatik und Konversation. Scriptor Verlag, Königstein, 1980 S. 194.

Բ. Լեոն *գուցե*, սակայն Ռիտան՝ ոչ, նա պարզապես չի ուզում Լեոյին հակաճառել:

Շեշտված ԵՄ-ի նման անշեշտ *schon*-ը նույնպես արտահայտում է խոսողի չարտահայտած վերապահումը, որին հաջորդելու է *aber*-ով նախադասություն: Հաջորդ օրինակում հեղինակը կամխում է ընթերցողի հնարավոր հարցը և *schon*-ով նշում, սահմանափակում է այն, որը, սակայն, չի արտահայտվում բացահայտորեն:

Doch, sagte Gauß mit auf den Boden gehefteten Augen. Das sei *schon* richtig /Kehlmann D., 2005: 146/.

Գաուսն աչքերը գետնին հառած ասաց՝ ոչ: Դա ճիշտ է /Քեյլման Դ., 2010:98/:

Schon-ի՝ ընդհանուր իմացությունը բացահայտորեն մատնանշելու գործառույթը նույնպես բավականին մեծ է: Եթե *ja*-ն ավելի շուտ արտահայտում է համաձայնություն այդ իմացության առումով, ապա *doch*-ով և *schon*-ով ի սկզբանե մերժվում է խոսակցի հնարավոր առարկությունը, թե նա տվյալ իրողությունը չի հիշում կամ չգիտի այդ մասին: *Doch*-ը դա անում է անառարկելի կերպով, մինչդեռ *schon*-ը որոշակի տեղ է թողնում հնարավոր առարկությունների համար:

Իր հաստատական բնույթի պատճառով *schon*-ը չի կարող հանդես գալ իսկական **հարցական** նախադասություններում: Սակայն այն կարող է կիրառվել այնպիսի հարցերում, որոնցով խոսողը հասկանալ է տալիս, որ հարցում արծարծվող իրողությունը հայտնի կամ հասկանալի է լսողին: Այդ կիրառությամբ *schon*-ը միշտ անշեշտ է: Հռետորական հարցերում *schon*-ի գործառույթը *ja*-ի և *doch*-ի նման նկարագրվում է որպես հիմնավորման ցուցիչ:

Schon պարունակող հռետորական հարցերը *doch* պարունակող ասույթների նման ի հայտ են բերում հավանություն հայցելու ավելի մեծ տարր: Դա կարելի է վերագրել հռետորական հարցին ընդհանրապես, քանի որ դրանով խոսողն ուզում է դրդել լսողին՝ հիշելու քննարկվող իրողությունը և ընդունելու խոսողի կարծիքը: Հետևյալ հռետորական հարցերը *Wem traut man schon?* /Ու՞մ են վստահում *դր!* / *Wer konnte ihm schon* helfen? /Դե ո՞վ կարող է նրան օգնել/ պատմողականի փոխակերպելիս համաձայնություն հայցելու գործառույթը ստանձնում է *doch*-ը. *Man traut doch niemandem. Man kann ihm doch nicht helfen.*

Schon-ի ժամանակային բնույթն ավելի պարզորոշ է երևում հրամայական նախադասություններում: Այստեղ այն միշտ անշեշտ է: Հրամանին այն տալիս է կարևորություն, նշում է, որ խոսողն ակնկալում է իր պահանջի անհապաղ իրագործում: Օրինակ՝

Nun nehmen Sie doch *schon* endlich den Hut ab! /Kästner E., 1998: 225/.

Դե վեջապես հանե՛ք ձեր գլխարկը:

ԵՄ schon-ը չի կարող կիրառվել խոսքային այնպիսի գործողություններում, ինչպիսիք են առաջարկը, խորհուրդը և խնդրանքը, քանի որ այն ասույթին միշտ ավելացնում է կշտամբանքի իլոկուցիա:²⁸ Խոսողի անհամբերությունն ու կշտամբալից վերաբերմունքը դեպքերի մեծ մասում առկա են և բխում են schon-ի ժամանակային և կրկնվող բաղադրիչից: Ընդհանուր առմամբ schon-ը զգալիորեն ավելի քիչ է հանդիպում երկրորդական նախադասություններում, քան doch-ը և ja-ն, և, այդուհանդերձ, schon-ի կարևոր կիրառություններից է նրա՝ wenn շաղկապով սկսվող **պայմանի երկրորդական** նախադասություններում հանդիպելը: Երկրորդական նախադասության նախադրույթը schon-ը մշում է որպես ոչ ինքնին հասկանալի, իսկ գլխավոր նախադասության նախադրույթը երկրորդականի համեմատությամբ՝ ավելի ընդունելի և հասկանալի /նույն տեղում: 115/: Նշվածի համար կարճ բնութագիր կարող է ծառայել կարծրատիպային «Wenn schon, denn schon» արտահայտությունը:

Շարադրանքը թույլ է տալիս եզրակացնել, որ քննարկվող երեք մասնիկներն ունեն կիրառության ընդհանրություններ, և որ երեք ԵՄ-ների հնարավոր համապատասխանությունները հայերենում մասամբ հանընկնում են, դրանք են *դե, էլի, չէ որ, դե հա/ դե այո՛, իհարկե* եղանակավորող բառերն ու արտահայտությունները: Թարգմանիչները դեպքերի մեծամասնությամբ խուսափում են գերմաներենի ԵՄ-ները թարգմանելուց, համապատասխան համարժեք չգտնելով՝ դրանք ուղղակի բաց են թողնում: Նման իրավիճակը, մեր կարծիքով, վկայում է այն մասին, որ ԵՄ-ների խնդիրը դժվար լուծելի է և՛ բառարաններում նրանց ներկայացվածության առումով, և՛ թարգմանական հնարավորությունների առումով:

Եզրակացության բաժնում ամփոփվում են հետազոտության արդյունքները:

1. Եղանակավորող մասնիկները գերմաներենի լեզվական տիպի կարևոր երևույթներից են և վերջին տասնամյակներին դարձել են լեզվաբանական տարբեր ուղղությունների հետազոտության առարկա: Եղանակավորող մասնիկները հատկապես ուշադրության են արժանացել լեզվաբանության մեջ գործաբանական ուղղության զարգացման հետևանքով: Համապատասխան տեսակետների, ինչպես նաև լեզվական փաստերի վերլուծությունից երևում է, որ ԵՄ-ները իրենց մի շարք իմաստային ու գործառական հատկանիշների

²⁸ Gornik- Gerhardt H. Zu den Funktionen der Modalpartikel schon und einiger ihrer Substituentia, Tübingen, 1981, S. 105.

հիման վրա կարող են դիտարկվել նաև որպես առանձին և ինքնուրույն խոսքի մաս:

2. Հետազոտությունից պարզ դարձավ նաև, որ անմիջական կապ գոյություն ունի մասնիկների կիրառության հաճախականության և երկխոսության բնույթի միջև: Հետևաբար մասնիկների հաճախ կիրառությունը կարելի է գնահատել որպես ցուցիչ տարբեր հարաբերությունների, մասնավորապես մտերմության բարձր աստիճան մատնանշելու համար: ԵՄ-ների կիրառության ճշգրիտ վերլուծությունը կարևոր տեղեկույթ է տալիս հաղորդակցության գործընթացը հասկանալու և մեկնաբանելու համար:

3. Գոյություն չունի որևէ իմաստաբանական մեթոդ, որն այս կամ այն չափով հարմար կլիներ ԵՄ-ների իմաստը սահմանելու համար: ԵՄ-ների իմաստները աչքի են ընկնում նրանով, որ չունեն առանձին կամ առանձնացվող բառիմաստ, սակայն նրանք որոշակի խոսքային իրադրություններում կարող են արտահայտել խոսողի դիրքորոշումը: ԵՄ-ների գործառնությունների նկարագրությունը որոշակի պատկերացում է տալիս կիրառվող համատեքստի և իրադրության մասին:

4. Վերլուծությունը ցույց տվեց, որ ուսումնասիրված ԵՄ-ներից և ոչ մեկը հնարավոր չէ նկարագրել միայն մեկ հատկանիշով: Առանձին ԵՄ-ների իրարից զգալիորեն տարբերվող գործառնություններ ունենալը բացատրում է այն հանգամանքը, թե ինչու գրեթե հնարավոր չէ համապատասխան, հարմար սահմանում տալ բոլոր ԵՄ-ների իմաստի կամ գործառնության համար: Թեև ԵՄ-ների իմաստը մեծապես կախված է համատեքստից, այդուհանդերձ, ինչպես ցույց տվեց վերլուծությունը, յուրաքանչյուր ԵՄ ցանկացած համատեքստում պահպանում է իր որոշակի իմաստային «կորիզը», որն էլ ապահովում է տվյալ ԵՄ-ի համատեղելիությունը տվյալ համատեքստի հետ: Միննույն ժամանակ, սակայն, իմաստային այդ «կորիզը» կոնկրետանում կամ մասնավորեցվում է տվյալ համատեքստում: Սույն աշխատանքի շրջանակում նկարագրված ԵՄ-ների իմաստային կորիզն այն է, ինչը մեկ ԵՄ-ը տարբերում է մյուսից:

5. Վերլուծության հաղորդակցական-գործառնական, ինչպես նաև երկխոսության վերլուծական մոտեցումը հետաքրքիր տվյալներ է տալիս ԵՄ-ները նկարագրելու և նրանց էությունը բացահայտելու համար: ԵՄ-ներին վերագրվող գործառնական բնութագրերն ածանցվում են ԵՄ-ների իմաստային հիմքից և, ըստ էության, ներկայացնում են ԵՄ-ի այդ առաջնային իմաստի, համատեքստի և հաղորդակցական իրադրության փոխներգործության արդյունք: Ելնելով վերլուծությունից, կարելի է ասել, որ ԵՄ-ները որոշակի իրադրություններում տեքստակազմիչ, ինչպես նաև տեքստը

արտալեզվական իրադրության հետ կապող գործառույթ են ստանձնում:

6. Զգալի դժվարություններ է հարուցում ԵՄ-ների նկարագրությունը բառարանագրության համար: Աշխատանքում տեղ գտած ԵՄ-ների նկարագրությունը և վերլուծությունն իրենց տարբեր կիրառություններում կարող են հիմք լինել երկլեզու բառարաններում տվյալ մասնիկների համեմատաբար բազմակողմանի ներկայացման համար:

7. Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս նաև, որ գերմաներենի ԵՄ-ների համեմատաբար փակ դասին հայերենում համապատասխանում են բավականին տարաբնույթ միջոցներ, որոնք կարող են համարվել մասնակի համարժեքներ: Համարժեքների թվին են պատկանում նաև հնչերանգային և առոգաբանական միջոցները, որոնք, սակայն, նկարագրության հարմար գործիքների բացակայության հետևանքով դժվար սահմանելի են և մեծ մասամբ դուրս են մնում համարժեք զուգադրման սահմաններից:

8. Ուսումնասիրելով գերմաներենի օրինակները և նրանց հայերեն համարժեքները՝ հանգում ենք հետևյալ եզրակացության.

ա/ Հայերենի կենդանի խոսքում կիրառվում են բառեր և արտահայտություններ, որոնք հակված են որոշակի համատեքստ-ստանձնելու ԵՄ-ների դեր, ինչպես որ *հանկարծ* և *չատ* բառերը:

բ/ Ինչպես գերմաներենում, հայերենում նույնպես առկա են իբրև մասնիկներ իրացվող լեզվական միավորներ, որոնք չեն փոխում նախադասության իմաստը, եթե իմաստ ասելով հասկանում ենք դրա «ճշմարտացիության պայմանները»:

գ/ Հայերենում նույնպես կարելի է տարանջատել եղանակավորող մասնիկ և կիզակետող, բևեռացնող, ասույթի նորն ընդգծող միջոցներ, որոնք իրենց պահում են իբրև եղանակավորող մասնիկներ:

9. Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս նաև պնդել, որ իրականում այդ «փոքր բառերը» լեզվում կարևոր գործառույթներ ունեն և էական դեր են կատարում հաղորդակցության կայացման գործում: Բացի այդ «անմշան» բառերի հետազոտությունը ոչ միայն նոր ճանաչողություն է բերում ԵՄ-ների գործառույթի, նրանց իմաստի և նշանակության վերաբերյալ, այլ նաև այդ ճանաչողությունն իր հետ կարող է արգասաբեր նոր հարցադրումներ առաջադրել:

Գրականության ցանկում ներկայացված են հետազոտության համար մեր կողմից ուսումնասիրված գիտական գրականության, բառարանների, ինչպես նաև զեղարվեստական գրականության ցանկը:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Եղանակավորող բառերի գործառույթը նախադասության մեջ // Կանթեղ, 3(16), Գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., Երևան, 2003, էջ 60-63:
2. Գերմաներենի «schon» եղանակավորող բառի համարժեք թարգմանության մասին // Ռոմանագերմանական լեզվաբանություն, Գիտական աշխատությունների ժողովածու, «Լինգվա» հրատ., Երևան, 2006, պրակ բ, էջ 84-89:
3. Եղանակավորող մասնիկների տեքստակազմիչ գործառույթի շուրջ // Կանթեղ, 3 (44) Գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., Երևան 2010, էջ 97-99:
4. Գերմաներենի եղանակավորող մասնիկները որպես եղանակավորման միջոցներ // Օտար լեզուները Հայաստանում, գիտամեթոդական հանդես, Երևան, 2012, համ.6, էջ 3-13:
5. Գերմաներենի «schon» եղանակավորող մասնիկը և նրա արտահայտման միջոցները հայերենում // Կանթեղ, 2 (55), Գիտական հոդվածների ժողովածու, «Ասողիկ» հրատ., Երևան, 2013, էջ 79-86:

Каринэ Максимовна Оганесян

ТИПОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ НЕМЕЦКИХ МОДАЛЬНЫХ ЧАСТИЦ

Диссертация на соискание ученой степени кандидата
филологических наук по специальности 10.02.07 «Германские
языки»

Защита состоится 6-го декабря 2013г. на заседании
специализированного совета 009 ВАК РА, действующего в
Ереванском государственном университете
(Ереван, Алека Манукяна 1)

Резюме

Диссертационное исследование посвящено изучению специфики средств выражения модальности в немецком языке на примере модальных частиц.

Объектом исследования являются типологические характеристики модальных частиц ja, doch, schon, в частности, их прагматические особенности и различные аспекты функционирования.

Целью настоящего исследования является всесторонний анализ модальных частиц немецкого языка, выявление их семантических и функциональных аспектов в различных контекстах. Для достижения поставленной цели в работе выдвигаются следующие конкретные **задачи**: 1. Представить современные подходы в определении модальных частиц. 2. Подробно анализируя модальные частицы как типологическую особенность немецкого языка, исследовать поле модальности, а также взаимосвязь и взаимодействие модальных частиц с другими средствами выражения модальности. 3. Проанализировать степень исследованности средств выражения модальности в арменистике, осуществить сопоставительный анализ немецких модальных частиц с соответствующими средствами в армянском языке. 4. Выявить коммуникативно-прагматические функции модальных частиц немецкого языка.

В диссертации использованы **методы** описания, сопоставления языковых фактов, а также отдельные положения и принципы прагматической и типологической лингвистики.

Актуальность настоящего исследования обусловлена тем, что в нем выявляется взаимосвязь и взаимовлияние основных типологических и прагматических теорий, для которых модальные частицы, с одной стороны, представляют собой в определенной степени камень преткновения, а с другой, именно в этих теориях они получают совершенно иное, новое толкование.

Новизна исследования состоит в том, что в работе на примерах отдельных частиц представлена попытка комплексного семантико-прагматического описания модальных частиц немецкого языка, их типологических особенностей в сопоставлении с соответствующими фактами армянского языка.

Теоретическая значимость работы состоит в том, что она может способствовать развитию теории немецкого языка, прагматике и межкультурной коммуникации.

Практическое значение диссертации заключается в том, что результаты исследования могут быть использованы в преподавании немецкого языка, а также в спецкурсах по прагматике, сопоставительной типологии немецкого и армянского языков.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и библиографии.

Во введении определяются тема и задачи исследования, обосновывается научная новизна, актуальность, теоретическая и практическая значимость данного исследования, его основные методы.

В первой главе модальные частицы рассматриваются в хронологии их исследования в различных лингвистических направлениях. Подробно обсуждается вопрос модальных частиц как самостоятельной части речи.

Вторая глава посвящена исследованию категории модальности, семантики модальных частиц немецкого языка, их взаимосвязи с другими средствами выражения модальности. Рассматриваются также морфологические, синтаксические и текстообразующие функции модальных частиц. Для дальнейшего сопоставительного анализа дается краткий обзор существующих в арменистике работ, посвященных модальным словам.

Третья глава посвящена изучению контекстуальных особенностей функционирования модальных частиц *ja*, *doch*, *schon* в предложениях разного типа и средствам их передачи на армянский язык.

В заключении представлены основные выводы исследования.

Karine M. Hovhannisyan

**THE TYPOLOGICAL PECULIARITIES OF MODAL PARTICLES
IN GERMAN**

Summary

The subject matter of the present paper is the study of the peculiarities of linguistic means expressing modality in the German language, based on the material of modal particles.

The primary **goal** of the research is to show typological characteristics of German *ja*, *doch* *schon* particles, their pragmatic peculiarities and different functional aspects.

The research **aims** at thorough analysis of the German modal particles, their semantic and functional aspects in different contexts. To achieve the goal of the research the following objectives are set forth: 1. to analyse the modern trends on the definition of modal particles, 2. to examine modal particles as a typological peculiarity of the German language, study the field of modality and the interrelations of modal particles and other means expressing modality, 3. to study the means of expressing modality in Armenian, and carry out contrastive analysis of German modal particles and corresponding means in the Armenian language, 4. to determine the pragmatic and communicative role of the German modal particles.

The **methods** used in the thesis are as follows: descriptive, contrastive as well as some principles of pragmatic and typological linguistics.

The research has both theoretical and practical value. As for the **theoretical value**, it may support the further development of the theory of the German language, pragmatics and intercultural communication. The **practical** significance of the thesis is that the results of the research may be used in teaching German as a foreign language, in special workshops devoted to pragmatic issues and contrastive typology of the German and Armenian languages.

The **topicality** of the thesis is conditioned by the fact, that the German modal particles are viewed within the framework of interwoven typological and pragmatic theories, hence, they obtain new, different interpretations.

The **novelty** of the thesis lies in the complex semantic and pragmatic analysis of the German modal particles, their typological characteristics in comparison with the correlated units in Armenian.

The thesis includes an introduction, three chapters, conclusion and bibliography.

Introduction presents the subject matter, the topicality and novelty, the theoretical and practical significance of the research in the proposed field as well as the methods applied to the investigation.

Chapter One presents a detailed analysis of the main trends in the investigation of the German modal particles. The problem of the modal particles as an independent part of speech is also discussed.

Chapter Two presents a study of the category of modality, the semantics of modal particles and their interrelation with other means of expressing modality in German. Special attention is paid to the morphological, syntactical and text-forming functions of German modal particles. The analysis of German modal particles and the correlated units in Armenian is also presented.

Chapter Three is devoted to the investigation of contextual peculiarities of the German modal particles in sentences of different types and means of transmitting them into Armenian.

The **Conclusion** presents the main findings of the research.

A handwritten signature in black ink, appearing to be 'Z. H. H.', is located in the lower right quadrant of the page.